## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

**« 26 » փետրվարի 2020թ.-ին կնքված N «ՎԱԱՏ-ՀՄԾՁԲ-20/1-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի**

ք.Երևան «19» 01 2023թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ (լիազորագիր տրված 22.08.2022թ) Վազգեն Կարապետյանի (նույնականացման քարտ 011600749, տրված 07.12.2020թ. 013-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավարի պարտականությունները կատարող Ս. Սարգսյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), երեքը միասին՝ կողմեր, հիմք ընդունելով «ՎԱԱՏ-ՀՄԾՁԲ-20/1-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2023թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել է 997600 (ինը հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել ֆինանսական պարտավորությունները և վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2023թ-ի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2023թ-ի դեկտեմբերի 31-ը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով սահմանված Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>ՀՀ 900011024057<br>ՀՎՀՀ 02505554 | «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ<br>ք. Երևան, Ազատություն 24/1<br>«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ<br>ՀՀ 163004038879<br>ՀՎՀՀ 02500052 | Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին<br>ք. Երևան, Ա.Արմենակյան փող. 129<br>ՀՎՀՀ 00481699 |
| ----------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ----------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ----------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 26 » փետրվարի 2020թ. կնքված*
*ՎԱԱՏ-ՀՄԱԾՁԲ-20/1-1 ծածկագրով պայմանագրի*
*« 13 » 01 2023թ. կնքված N 4 Համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64211100/1 | հանրային հեռախոսային ծառայություններ | 199520 | 199520 | 199520 | 448920 | 448920 | 448920 | 698320 | 698320 | 698320 | 997600 | 997600 | 997600 | 997600 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
** վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024057
ՀՎՀՀ 02505554
----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163004038879
ՀՎՀՀ 02500052
----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՑՈՂ**
Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ք. Երևան, Ա.Արմենակյան փող. 129
ՀՎՀՀ 00481699
----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ